ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

"03" Դեկտեմբեր 2026 թվական N 03-Ն

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի ԹԻՎ 12-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՎՃԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՆՄՈՒՇՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փոստային կապի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 45-րդ կետի և 10-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով.

1. Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի 2025 թվականի դեկտեմբերի 19-ի «2026 թվականի փոստային վճարման պետական նշանների թեմաները սահմանելու և փոստային վճարման պետական նշանների անվանագները, տպաքանակն ու գործողության մեջ դնելու ժամկետները հաստատելու մասին» N 12-Ն հրամանի հավելվածում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Հավելվածի 10.1-ին կետի՝ «Անվանագինը (դրամ)» սյունակի «380» թիվը փոխարինել «320» թվով:

2. Հաստատել փոստային վճարման պետական նշանների նմուշները՝

1) Սպորտ. XXV Ձմեռային Օլիմպիական խաղեր թեմային նվիրված «XXV ՁՄԵՌԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐ. XXV WINTER OLIMPIC GAMES» 1 նամականիշի, համաձայն N 1 հավելվածի.

2) Միջազգային. Եվրոպա 2026. ԵՎՐՈՊԱ նամակնիշի 70-ամյակ թեմային նվիրված 1 նամականիշի, համաձայն N 2 հավելվածի.

3) Մեծանուն հայեր. Մետաքսյա Սիմոնյանի ծննդյան 100-ամյակ թեմային նվիրված «ՄԵՏԱՔՍՅԱ ՍԻՄՈՆՅԱՆ. METAKSYA SIMONYAN. 1926-1987. ՀԱՅ ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻ. ARMENIAN ACTRESS» 1 նամականիշի, համաձայն N 3 հավելվածի.

4) Հայկական ֆիլմեր. Հայկական ֆիլմեր. «Բարև, ես եմ» թեմային նվիրված «ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼՄԵՐ. ARMENIAN FILMS. ԲԱՐԵՎ, ԵՍ ԵՄ. HELLO, IT'S ME» 1 նամականիշով գեղաթերթիկի, համաձայն N 4 հավելվածի.

5) Մանկական ֆիլատելիա. Հայկական մուլտֆիլմեր թեմային նվիրված «... ԵՎ ԱՄԵՆ ԵՐԵԿՈ. ... AND EVERY EVENING» 1 նամականիշի, համաձայն N 5 հավելվածի:

3. Գործողության մեջ դնել՝

1) Սպորտ. XXV Ձմեռային Օլիմպիական խաղեր թեմային նվիրված «XXV ՁՄԵՌԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐ. XXV WINTER OLIMPIC GAMES» 1 նամականիշը, անվանագինը՝ 380 դրամ, տպաքանակը՝ 10 000 հատ.

2) Միջազգային. Եվրոպա 2026. ԵՎՐՈՊԱ նամակնիշի 70-ամյակ թեմային նվիրված 1 նամականիշը, անվանագինը՝ 400 դրամ, տպաքանակը՝ 15 000 հատ.

3) Մեծանուն հայեր. Մետաքսյա Սիմոնյանի ծննդյան 100-ամյակ թեմային նվիրված «ՄԵՏԱՔՍՅԱ ՍԻՄՈՆՅԱՆ. METAKSYA SIMONYAN. 1926-1987. ՀԱՅ ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻ. ARMENIAN ACTRESS» 1 նամականիշը, անվանագինը՝ 380 դրամ, տպաքանակը՝ 10 000 հատ.

4) Հայկական ֆիլմեր. Հայկական ֆիլմեր. «Բարև, ես եմ» թեմային նվիրված «ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼՄԵՐ. ARMENIAN FILMS. ԲԱՐԵՎ, ԵՍ ԵՄ. HELLO, IT'S ME» 1 նամականիշով գեղաթերթիկը, անվանագինը՝ 800 դրամ, տպաքանակը՝ 10 000 հատ.

5) Մանկական ֆիլատելիա. Հայկական մուլտֆիլմեր թեմային նվիրված «... ԵՎ ԱՄԵՆ ԵՐԵԿՈ. ... AND EVERY EVENING» 1 նամականիշը, անվանագինը՝ 320 դրամ, տպաքանակը՝ 10 000 հատ:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

3/3/2026

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ X **ԳԵՎՈՐԳ ՄԱՆԹԱՇՅԱՆ**

ԳԵՎՈՐԳ ՄԱՆԹԱՇՅԱՆ

Signed by: MANTASHYAN GEVORG 1314880984

Հավելված 1
ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարի
2026թվականի հունվարի 03ի թիվ 03-Ն հրամանի

Հավելված 2
ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարի
2026 թվականի հունվարի 03/ա թիվ 03-Ն հրամանի

Հավելված 3
ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարի
2026թվականի հունվարի 03-ի թիվ 03-Ն հրամանի

Հավելված 4
ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարի
2026թվականի հունվարի 03ի թիվ 03-Ն հրամանի

Հավելված 5
ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարի
2026թ-ի հունվարի 5-ի թիվ 03-Ն հրամանի



ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
МИНИСТЕРСТВО ВЫСОКОТЕХНОЛОГИЧЕСКОЙ ПРОМЫШЛЕННОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
MINISTRY OF HIGH-TECH INDUSTRY OF THE REPUBLIC OF ARMENIA
02565518